ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 11 » հունվարի 2024 թ. N 6-Ա/Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 64-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2297-Լ որոշման հավելվածի 3-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու համար աջակցության տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

1/11/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2024 թ. դեկտեմբերի 11 -ի N 6 -Ա/1 հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 64-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

---------- «-----» ---------- 20---- թ.

(կնքման վայրը)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության ----------
(տարածքային կենտրոնի անվանումը)
տարածքային կենտրոնը, այսուհետ՝ Տարածքային կենտրոն, ի դեմս տնօրեն ----------

---------- - ի, որը գործում է----------
(ազգանունը, անունը, հայրանունը) (կանոնադրության կամ լիազորագրի)

հիման վրա, մի կողմից և

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած ծնողի ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տալու օրը, ամիսը, տարեթիվը (կամ հանրային ծառայությունների համարանիշը), հաշվառման վայրը, իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև ներկայացուցչի անունը, ազգանունը, լիազորագիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

այսուհետ՝ Շահառու, մյուս կողմից, (բոլորը միասին համատեղ հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2297-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան Շահառուին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արդյունավետ կազմակերպման հարցում աջակցության տրամադրումն է:

2. Պայմանագրի համաձայն՝

1) Շահառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված ժամկետից ոչ պակաս ժամկետով երեխայի խնամքն իրականացնող անձի (այսուհետ՝ դայակ) կամ վճարովի հիմունքներով գործող նախադպրոցական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի հետ երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր,

2) Տարածքային կենտրոնն ապահովում է Շահառուին աջակցության տրամադրումը՝ Պայմանագրով սահմանված չափով, ժամկետում և պայմաններին համապատասխան:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության՝ Շահառուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ Որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում Շահառուին երեխայի խնամքը կազմակերպելու համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Պայմանագրի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան, Շահառուին տրամադրել աջակցություն՝ իր երեխայի խնամքը դայակի կամ հաստատության միջոցով կազմակերպելու համար,

3) աջակցությունը տրամադրել Շահառուին անկանխիկ եղանակով՝ Շահառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով,

4) չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Պայմանագիրը կնքելուց հետո հնգօրյա ժամկետում Շահառուից ստանալու հայտարարություն նրա բանկային հաշվի տվյալների մասին,

2) Պայմանագիրը կնքելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Շահառուից ստանալու դայակի կամ հաստատության հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը,

3) ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումարը դայակին կամ հաստատություն փոխանցելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Շահառուից ստանալու փոխանցման անդորրագրի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը.

4) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

5. Շահառուն պարտավորվում է՝

1) Պայմանագիրը կնքելուց հետո հնգօրյա ժամկետում Տարածքային կենտրոն ներկայացնել հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին,

2) Պայմանագիրը կնքելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Տարածքային կենտրոն ներկայացնել դայակի կամ հաստատության տնօրենի հետ երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով կնքած ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը,

3) ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումարը դայակին կամ հաստատություն փոխանցելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով Տարածքային կենտրոն ներկայացնել փոխանցման անդորրագրի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը,

4) Շահառուի և դայակի կամ հաստատության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխության կամ լուծման դեպքում այդ մասին տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ փոփոխությունը կատարելուց կամ պայմանագիրը լուծելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնելով փոփոխված պայմանագրի պատճենը:

6. Շահառուն իրավունք ունի՝

1) Տարածքային կենտրոնից պահանջելու տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ Որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում Շահառուին երեխայի խնամքը կազմակերպելու համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Տարածքային կենտրոնից ստանալու իր երեխայի խնամքը կազմակերպելու համար աջակցություն՝ Պայմանագրի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան,

3) Տարածքային կենտրոնից պահանջելու չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ, և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

4) իրականացնելու Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Պայմանագրի համաձայն՝ Շահառուին յուրաքանչյուր երեխայի խնամքը օրական առնվազն վեց ժամով կազմակերպելու համար ամսական կտրվածքով վճարվում է գումար՝ ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ամսական վարձատրության չափով, բայց ոչ ավելի, քան 104000 դրամը:

8. Պայմանագրի 7-րդ կետում նշված գումարը Շահառուի բանկային հաշվեհամարին է փոխանցվում Որոշման հավելվածով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

9. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում են գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

11. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունք,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

13. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

15. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

16. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

18. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավերական է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

19. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև _____ 20 թ.: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

20. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց հետո Շահառուն դայակի կամ հաստատության տնօրենի հետ երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով չի կնքում կամ վաղաժամկետ լուծում է ծառայությունների մատուցման պայմանագիրը կամ թույլ է տվել Պայմանագրի այլ էական խախտում:

21. Պայմանագիրը կազմված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից Տարածքային կենտրոնին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
միասնական սոցիալական ծառայության

_____

(տարածքային կենտրոնի անվանումը)

տարածքային կենտրոն

Գտնվելու վայրը ----------
Հեռ. ----------
Էլ. փոստ. ----------
Հ/հ ----------
ի դեմս ----------

_____

(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

_____

(ստորագրությունը)

Կ.Տ. -------- ---------- 20--- թ.

Շահառու՝

_____

(ազգանունը, անունը)

Բնակության վայրը ----------
Հեռ. ----------
Էլ. փոստ. ----------

_____

(ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը)

_____

(շահառուի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

-------- ---------- 20-----թ.